244D.


# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710


Թիւ 405
Ապրիլ 4, 1991

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուաշինկթըն, Տի. Սի.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք համայնքիդ Անդամական ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 12, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական ժողովը գումարուած է Յունուար 27 եւ Փետրուար 10, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին հինգ անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Յակոբ Տիլանեան
Գնդ. Մուրատ Մուրատեան
Յակոբ Մարգարեան
Յակոբ Սաֆար
Մայք Թաշճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ ձեր տեղեկագիրներուն մէջ չգտանք քուէաթուղթէն օրինակ մը, եւ կարգ մը անդամներ չէին ստացած երկու երրորդ քուէն՝ նկատի ունենալով որ Անդամական ժողովներուն տրատու անդամներուն մէկ երրորդը կամ 50 անդամ ներկայ չէին եղած։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը։ Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ